**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**1. Անունը, ազգանունը**

Կարեն Բրուտյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

**3. Գործուղման վայրը և ժամկետները**

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)

2019 թվականի հոկտեմբերի 10-12

**4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողով

**5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն պետական (մունիցիպալ) գնումների հարցերով բարձր մակարդակի աշխատանքային խմբի նիստին

**6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

1. Պետական գնումների ընթացակարգերում ազգային ռեժիմի նկատմամբ կիրառված բացառությունների ժամկետների երկարաձգման և (կամ) ազգային ռեժիմի նկատմամբ կրկնակի բացառությունների սահմանման մեխանիզմների մշակում

2. Պետական գնումների ընթացակարգերում կիրառվող բանկային երաշխիքների փոխադարձ ճանաչման վերաբերյալ համաձայնագրի նախագծի քննարկում

**7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Աշխատանքային խմբի նիստի ընթացքում ներկայացվել են հայկական կողմի մոտեցումները, ինչպես նաև առաջարկություններ՝ նախագծվող փաստաթղթերով սահմանվելիք կարգավորումների վերաբերյալ

**8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Աշխատանքային խմբի նիստի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵԱՏՄ Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանման հետ համատեղ փորձագետների մակարդակում շարունակել համապատասխան կարգավորումներ սահմանող փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքները

**9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Աշխատանքային խմբի նիստին մասնակցելուց ակնկալվող արդյունքը համապատասխան կարգավորումներ սահմանող փաստաթղթերի նախագծերում հայկական կողմի մոտեցումների արտացոլումն է: Փաստաթղթերի հաստատման դեպքում կդյուրացվի հայաստանյան ռեզիդենտ հանդիսացող կազմակերպությունների՝ ԵԱՏՄ անդամ հանդիսացող երկրներում կազմակերպվող պետական գնումների ընթացակարգերին մասնակցության հնարավորությունները

**10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

**4.10.2019թ.**